

---

---

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Турция выигрывает от российско-украинского газового конфликта .....	4
Ռուս-ուկրաինական գազային ճգնաժամի քաղաքական համատեքստը .....	7
Գազի հերթական ճգնաժամը ռուս-ուկրաինական հարաբերություններում և երրորդ երկրների ներգրավվածության աստիճանն այս հարցում .....	10
Միջազգային էներգետիկ գործակալություն. «Համաշխարհային էներգետիկայի կանխատեսումներ - 2008թ.» զեկույցի վերլուծականը .....	13
По горячим следам .....	22
Кто проиграл в газовой войне? .....	24

## ТУРЦИЯ ВЫИГРЫВАЕТ ОТ РОССИЙСКО-УКРАИНСКОГО ГАЗОВОГО КОНФЛИКТА

Турция стала одной из тех стран, которые пострадали от российско-украинского газового конфликта. Несмотря на то, что газопровод «Голубой поток» непосредственно связывает друг с другом газотранспортные системы России и Турции и создает возможность для прямого экспорта российского газа по дну Черного моря, газотранспортная сеть западной части Турции ориентирована на получение российского природного газа с территории Болгарии. Прекращение поставок российского газа по украинскому маршруту привело к приостановке экспорта российского газа в западные районы Турции.

Несмотря на то, что «Газпром», Турецкая национальная корпорация нефти и «Botas» в течение считанных дней решили вопрос увеличения объема транспортируемого через «Голубой поток» природного газа и смогли решить проблему поставок газа в западные районы страны, турецкая пресса и политические деятели начали удачно использовать наличие проблем в экспорте российского газа для проталкивания турецких интересов, связанных:

- со вступлением Турции в ЕС,
- с реализацией проекта «Набукко»,
- с актуализацией энергетических проектов, в которых участвует Азербайджан.

### *«Набукко»<sup>1</sup> и вступление Турции в ЕС*

19 января находящийся в Брюсселе для проведения переговоров о перспективах вступления Турции в ЕС премьер-министр Турции Тайип Эрдоган выразил сомнения в экономической целесообразности строительства газопровода «Набукко» и заявил о намерении своей страны пересмотреть отношение к этому проекту. Эрдоган заявил, что Турция не поддержит проект «Набукко», если ЕС не разблокирует ту часть переговоров по вступлению страны в ЕС, которая касается вопросов энергетики. «Если мы окажемся в ситуации блокирования энергетической главы, мы, разумеется, пересмотрим нашу позицию», – заявил Эрдоган, говоря о «Набукко».

Стоит отметить, что Турция впервые на таком высоком уровне заговорила о нецелесообразности реализации проекта «Набукко». О том, что Турция не откажется от этого проекта, в октябре 2008г. в Баку заявил президент А.Гюль, а в середине ноября 2008г. председатель парламента Турции Кёксал Топтан заявил, что Турция привержена своим обязательствам по «Набукко» и продолжает поддерживать этот «важный проект».

Вряд ли можно считать, что позиция Турции по проекту в корне изменилась. Ведь если говорить об итогах российско-украинского газового конфликта, то они знаменуют только увеличение внимания к «Набукко» в качестве альтернативы получения природного газа из России. С этой точки зрения заявление Эрдогана надо рассматривать в качестве шантажа, который используется для ускорения вступления Турции в ЕС. Тут надо отметить, что претензии ЕС к Турции касаются не только вопросов политических реформ, нормализации отношений с

---

<sup>1</sup> Согласно проекту, газопровод «Набукко» должен соединить Европу с газовыми месторождениями Каспийского бассейна через Азербайджан, Грузию, Турцию, Болгарию, Румынию и Венгрию. К этому газопроводу может быть подключена и южная ветка, идущая из Ирака и стран Персидского залива и, возможно, Ирана. Стоимость проекта оценивается, по меньшей мере, в 9 млрд евро, протяженность «Набукко» должна составить 3,3 тысячи километров. При оптимистическом развитии событий первая очередь этого газопровода сможет вступить в строй не раньше 2012г.

соседями, но и конкретных вопросов, связанных с энергетикой. А их, на самом деле, не мало. Подписав «Европейскую энергетическую хартию», которая среди прочего предполагает либерализацию энергетического рынка, Турция Хартию не ратифицировала, а конкретных шагов по выполнению требований этого важного документа сделано пока еще очень мало. Речь тут идет о таких важных для европейских инвесторов вопросах, как:

1. либерализация сектора производства и транспортировки электроэнергии,
2. либерализация газотранспортного сектора,
3. либерализация нефтетранспортного сектора.

По всем этим направлениям Турция должна была завершить основную часть работ еще к 2006г., хотя сделанное турецким правительством нельзя считать реализацией даже половины требований европейцев и «Энергетической хартии». По каждому из вышеотмеченных вопросов турецкое правительство представило свои замечания и выступило с обоснованием их не выполнения. И теперь, используя трудности ЕС, возникшие из-за постоянных российско-украинских газовых споров, Турция стремится заставить Брюссель отказаться от давления на нее и принять ее в состав Союза без учета невыполненных обязательств. И надо сказать, что политика это во много оправдывает себя.

После критического заявления Эрдогана, сделанного в Брюсселе, начались переговоры турецкого премьера с президентом Еврокомиссии Жозе Мануэлом Баррозу. После встречи Жозе Мануэл Баррозу объявил, что между Турцией и странами Евросоюза достигнуто соглашение о необходимости строительства нового газопровода «Набукко», по которому газ из Центральной Азии будет поступать в Европу в обход России и Украины. Однако, по мнению Баррозу, нет необходимости увязывать вопрос строительства «Набукко» со вступлением Турции в ЕС: «Мы не должны увязывать проблему энергобезопасности с отдельным элементом в рамках наших переговоров о вступлении Турции в ЕС», хотя и европейские граждане могут быть заинтересованы в «хорошем сотрудничестве с Турцией по энергетическим вопросам». Он также предположил, что если Турция поможет Европе диверсифицировать поставки газа и ослабить зависимость от российского топлива, это может положительно повлиять на общественное мнение, пока настороженно относящееся к перспективе вступления в Евросоюз огромной мусульманской страны.

Между тем уже через день, 20-ого января, Баррозу выступил с предложением активизировать работу с Турцией, чтобы та днем раньше смогла стать членом ЕС, что повысит значение Европейского союза и «укрепит его энергетическую безопасность».

### ***Активизация азербайджанского и иранского факторов***

В то же время на уровне реальной политики Турция предпринимает попытки актуализировать роль Азербайджана и Ирана в обеспечении энергетической безопасности Европы. Выступая в брюссельском Центре европейской политики, Эрдоган заявил, что для заполнения газопровода «Набукко» вряд ли удастся найти необходимых 30 млрд кубометров газа в год. По его словам, проект «Набукко» будет иметь смысл, только если через него пустить в Европу газ не только из Казахстана, Туркменистана и Азербайджана, но и из Ирана<sup>1</sup>.

После августовских событий на Южном Кавказе, когда стала понятна ненадежность Грузии как транзитера энергоресурсов, возможность присоединения Туркменистана и Казахстана к Южно-кавказскому газопроводу резко снизилась. Сегодня Азербайджан является

---

<sup>1</sup> Отметим, что вопрос сотрудничества Ирана и Турции в энергетической сфере обсуждал несколькими днями раньше во время встречи турецкого премьера со спикером иранского парламента Али Лариджани, который заявил, что его страна готова углубить сотрудничество с Турцией в вопросах экспорта природного газа.

фактически единственной прикаспийской страной, которая готова стать участником проекта «Набукко». Этому, кроме экономических, есть и политические причины: энергетические проекты, лоббируемые Турцией и США, являются одной из составляющих западного вектора азербайджанской внешней политики, от которого Баку не готов отказаться. В этих условиях для Анкары стало понятным, что для реализации проекта «Набукко» и получения нужных финансовых и политических дивидендов от него необходимо включить в него и Иран, который обладает значительными запасами природного газа. Судя по заявлениям Эрдогана в Брюсселе, Турция намерена активизировать вопрос налаживания энергетического сотрудничества между ЕС и Тегераном. Надо сказать, что позиция Эрдогана в среде европейских политиков и экспертов никакой критики не вызвала, что означает одно: политика Турции по превращению Ирана и Азербайджана в ключевых, если не единственных участников «Набукко» имеет большие шансы быть удачной.

Со своей стороны Азербайджан тоже постарался получить свои дивиденды от российско-украинского газового конфликта. 18 января на заседании кабинета министров Азербайджана президент республики Ильхам Алиев заявил, что Азербайджан, в случае подписания транзитного соглашения, в 2009г. может начать поставки своего газа в Грецию и Болгарию через территорию Турции. Он подчеркнул, что Азербайджан превратился в страну – экспортера газа. «В настоящее время запасы газа в Азербайджане оцениваются минимум в 2 трлн м<sup>3</sup>, газификация внутри республики обеспечена на 85%», – указал глава АР. «Азербайджан полностью обеспечил свою энергетическую безопасность и превратился в надежного партнера. Сегодня в стране имеется семь трубопроводов для доставки газа и нефти на мировые рынки, и все они работают», – отметил И.Алиев.

Речь в данном случае идет о возможности заменить российский газ, поступающий в Грецию и Болгарию, азербайджанским<sup>1</sup>. Между тем, в начале января Иран объявлял о намерении вложить \$1,7 млрд инвестиций в разработку второй стадии азербайджанского месторождения Шах Дениз. Несмотря на отсутствие договоренностей между Баку и Тегераном, возможность иранских инвестиций в газовый сектор Азербайджана не исключена.

В заключение отметим, что Турция, скорее всего, в текущем году сделает энергетический вопрос ключевым при обсуждении перспектив своего членства в ЕС. Последний газовый конфликт между Россией и Украиной, в результате которого ряд европейских стран столкнулся с фактическим энергетическим кризисом, однозначно укрепит позиции Турции в переговорах с ЕС.

*Севак Саруханян  
Фонд «Нораванк»*

---

<sup>1</sup> Азербайджан получает газ с месторождений, разрабатываемых государственной компанией *SOCAR* на собственных месторождениях, а также в рамках долевого участия разработки морского месторождения Шах Дениз, добыча на котором в настоящий период составляет порядка 22 млн м<sup>3</sup> в сутки. В 2009г. компания намерена добыть 8 млрд м<sup>3</sup> газа.

## ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԳԱԶԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Չնայած հունվարի 19-ին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ստորագրված գազային նոր պայմանագիրն ընդհանուր առմամբ կարգավորեց Ուկրաինայի համար նախատեսված և վերջինիս տարածքով դեպի Եվրամիություն հոսող ռուսական բնական գազի խնդիրը, սակայն հարցն այդքանով չի փակվում:

Փաստն այն է, որ Մոսկվան ու Կիևը վերջնականապես չեն պայմանավորվել Ուկրաինա ռուսական կապույտ վառելիքի մատակարարման երկարաժամկետ գնի շուրջ<sup>1</sup>: Իսկ այդ հանգամանքը նշանակում է, որ կողմերը նաև չեն պայմանավորվել Ուկրաինայով դեպի Եվրամիություն հոսող ռուսական գազի տարանցման երկարաժամկետ գնի շուրջ<sup>2</sup>: Հետևաբար, հստակ է մի բան՝ ճգնաժամի պատճառները վերացված չեն: Ուստի, չնայած կողմերը հստակեցրել են այս տարվա խաղի կանոնները, բայց ավելի երկարատև հեռանկարում ճգնաժամը կարող է կրկնվել:

Հարց է առաջանում՝ թեև նախորդ տարիների նման Մոսկվան ու Կիևը ունեին գազի գնման ու դեպի Եվրամիություն տեղափոխման մասին համապատասխան պայմանագիր, և այդ իմաստով իրավիճակն էապես չի տարբերվում 2006-2007թթ. ու 2007-2008թթ. ձմեռներից, ինչու <sup>3</sup> 2006թ. ի վեր առաջին անգամ ռուսական կողմը որոշեց կրկին կիրառել իր էներգետիկ հնարավորությունները:

### *Իրավիճակային վերլուծություն*

Ռուս-ուկրաինական գազային այս ճգնաժամի հիմնական նորությունն այն էր, որ Մոսկվան կարևոր փոփոխություն մտցրեց Կիևի նկատմամբ կիրառվող էներգետիկ քաղականության մեջ: Նախկինում Ռուսաստանը երբեք ամբողջությամբ չէր դադարեցնում գազամատակարարումը՝ այդ թվում Ուկրաինա: Եթե 2006թ. Մոսկվան մի քանի օրով ընդամենը *կրճատեց* ուկրաինական ուղղությամբ հոսող բնական գազի ծավալները, ապա այս անգամ հունվարի 7-ից ի վեր գազամատակարարումը *դադարեցվեց ընդհանրապես*:

Եթե փորձենք այլ կերպ ձևակերպել տեղի ունեցածը, կստանանք մոտավորապես հետևյալ պատկերը՝ Ռուսաստանն իր էներգետիկ հնարավորությունները կիրառելու սպառնալիքից անցում կատարեց այդ սպառնալիքի կիրառմանը: Զուգահեռների առումով ներկայացվածը գրեթե նույնն է, ինչ 2008թ. օգոստոսին տեղի ունեցած վրաց-ռուսական պատերազմը:

---

<sup>1</sup> Մասնավորապես, այդ հետևության օգտին է խոսում այն հանգամանքը, որ կողմերը չեն հայտարարում, թե 2010թ. հունվարի 1-ից հետո որն է լինելու Ուկրաինայի համար նախատեսված ռուսական բնական գազի շուկայական գինը կամ այդ գնի մոտավոր շրջանակը: Հունվարի 18-ին Մոսկվայում կայացած Պուտին-Տիմոշենկո բանակցությունների արդյունքում կողմերը հայտարարեցին, թե 2010թ. հունվարի 1-ից անցնելու են գազի վաճառքի-գնման միջազգային՝ եվրոպական բարձր գներին: Նույն գներն է սահմանավելու նաև Ուկրաինայի տարածքով դեպի Եվրամիություն փոխադրվող ռուսական կապույտ վառելիքի տարանցման համար: 2009թ.-ի համար նշվեց, որ Մոսկվան գազը Կիևին վաճառելու է եվրոպական գնից 20% զեղչով, իսկ վերջինս էլ ռուսական կողմին թույլ կտա իր տարածքով գազ մատակարարել Եվրամիություն 2008թ.-ի՝ ցածր գներով: Հայտնի է, որ Ուկրաինային սահմանակից Եվրամիության երկրները հազար խորանարդ մետր ռուսական բնական գազի դիմաց միջինը վճարում են \$470: 2008թ. Ուկրաինան վճարում էր \$179.5:

<sup>2</sup> Հայտնի է, որ ուկրաինական կողմը միմյանց հետ է կապում իրեն վաճառվող ռուսական բնական գազի գինը և իր տարածքով դեպի երրորդ երկրներ հոսող ռուսական կապույտ վառելիքի տարանցման գինը:

<sup>3</sup> Հենց 2006թ. հունվարին առաջին անգամ բռնկվեց ռուս-ուկրաինական գազային լայնածավալ պատերազմը:

Սահակաշվիլու վարչակազմի իշխանության գլուխ գալուց (2003թ.) ի վեր առաջին անգամ Վրաստանի ուղղությամբ ռուսական ռազմաքաղաքական ճնշման կիրառման սպառնալիքը (ինչը խաղարկվում էր տարիներ 2003թ. ի վեր) անցած տարվա ամռանը ձևափոխվեց այդ սպառնիլիքի կիրառման:

Էական է, որպեսզի տեղի ունեցած փոփոխությունը գնահատվի «ըստ արժանվույն»: Քանի որ, եթե վրացական ուղղությամբ այդ փոփոխությունը հանգեցրեց Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասում առկա status quo-ի փոփոխությանը<sup>1</sup>, ապա ներկայացվածից հետևում է, որ ուկրաինական ուղղությամբ Կրեմլում դժվար թե բավարարվեն սոսկ դիրքային ձեռքբերումներով: Մոսկվայի որոշումը՝ սպառնալիքից անցնել էներգետիկ հնարավորության լիարժեք կիրառման, կամ այլ կերպ ասած՝ հաստել կարմիր գիծը, նշանակում է, որ նույնիսկ Պուտին-Տիմոշենկո գազային պայմանավորվածության ֆոնին անգամ այս տարի Ռուսաստանի համար ուկրաինական հարցը դեռ փակված չէ, և այդ ուղղությամբ Մոսկվան անցել է «ռազմական գործողությունների»: Գրեթե կասկածից վեր է, որ առաջիկայում Ուկրաինային լուրջ զարգացումներ են սպասվում, իսկ միջնաժամկետ հեռանկարում Կիևի համար աստիճանաբար ավելի դժվար է դառնալու վարել 1991թ. հետո ձևավորված իր «հավասարակշիռ» արտաքին քաղաքականությունը:

Միակ հարցը, որը դեռևս չի ստացել իր պատասխանը, հետևյալն է՝ ձեռնարկվող կամպանիայի արդյունքում Ռուսաստանին ի՞նչ չափով կհաջողվի իր գերիշխանության ներքո վերադարձնել ողջ Ուկրաինան, և եթե դա չստացվի ողջ երկրի կտրվածքով, ապա Կրեմլն ուկրաինական տարածքների ո՞ր մասի «անկախությունը» կճանաչի:

Եվս մեկ դիտարկում: Ինչպես Հարավային Կովկասի դեպքում, ուկրաինական ուղղությամբ ևս Ռուսաստանը նախօրոք փորձել էր ստանալ տարածաշրջանային որևէ ազդեցիկ պետության աջակցությունը: Եթե հարավկովկասյան ուղղությամբ այդ դերը փորձեց ստանձնել Թուրքիան, ապա Ուկրաինայի պարագայում նման դիրքորոշում որդեգրեց Գերմանիան<sup>2</sup>: Ինչը, խոստովանենք, հեռու չէ 20-րդ դարի առաջին կեսին Մոսկվայի կողմից կիրառված աշխարհաքաղաքական լուծումներից<sup>3</sup>:

### ***Հետևություններ***

Ներկայացվածում կարևոր տեղ ունի ժամանակի գործոնը:

Ռազմավարական առումով Ռուսաստանի համար էական է, որպեսզի ինքը կարողանա աշխարհաքաղաքական առավելագույն օգուտներ քաղել Մերձավոր Արևելքում ԱՄՆ ներգրավվածությունից, ինչը ծավալուն դիվանագիտական, ռազմական, տնտեսական և գաղափարախոսական ռեսուրսներ է խլում Վաշինգտոնից: Այդ հանգամանքը ոչ միայն սահմանափակում է ամերիկյան քաղաքականության կարողությունները հետխորհրդային տարածքում, այլև «հնարավորությունների պատուհան» է բացում Ռուսաստանի համար՝ վերականգնելու

<sup>1</sup> Ի նկատի ունենք նաև Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունների ճանաչումը, ինչն էլ նշանակում է, որ Հարավային Կովկասում Մոսկվան կոնկրետ փոփոխություններ է մտցրել իր քաղաքականությունում, որը մեզ համար դեռ միգուցե վերջնականապես հստակեցված չէ:

<sup>2</sup> Նման հետևության համար հիմք են ծառայում ոչ միայն ռուս-ուկրաինական գազային ճգնաժամի օրերին գերմանական դիրքորոշման դիտարկումը, այլև վերջին շրջանում Բեռլինի արտաքին քաղաքականության մեջ նկատվող ուշագրավ փոփոխությունները: Վերջին առանձնահատուկ օրինակը հունվարի 13-ին գերմանական «Շպիգել» հանդեսում տպագրված այդ երկրի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար և իշխող երկկուսակցական կոալիցիայի ուժերից մեկի՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փաստացի ղեկավար Ֆրանկ-Վալտեր Շտեյնմայերի բաց նամակն էր ԱՄՆ նորընտիր նախագահ Բարաք Օբամային, ուր Շտեյնմայերը կոչ է անում վերջինիս միջազգային քաղաքականության մեջ հաշվի առնել Ռուսաստանի կշիռը:

<sup>3</sup> Հնարավոր է, որ նույն լուծումն է գործում ներկայում նախկին ԽՍՀՄ մերձբալթյան հանրապետություններում (Էստոնիա, Լատվիա, Լիտվա) ծավալվող անկայունությունների հետևում, որոնց կազմակերպման մեջ ամերիկա-բրիտանական աղբյուրները մեղադրում են Մոսկվային:

ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային արեայում իր կորցրած դիրքերը: ԱՄՆ որոշումը՝ «դուրս գալ» իրաքյան խնդրից ու Եվրասիայում ձեռնամուխ լինել ռազմավարական նոր նախագծի իրականացմանը (օրինակ, Հնդկաստան-Կենտրոնական Ասիա գծով), Մոսկվայի համար բավարար ցուցիչ էր, որ «հնարավորությունների պատուհանն» առաջիկայում կարող է փակվել: Այդտեղից էր Կրեմլի վճռական քայլերը վրացական և ուկրաինական ուղղությամբ:

Ինչ վերաբերում է միայն ուկրաինական խնդրին, ապա նույն ժամանակի գործոնը կարևոր էր նաև այս դեպքում: Գաղտնիք չէ, որ 2009թ. վերջին Ուկրաինայում կայանալու են նախագահական ընտրություններ: Մոսկվայի որոշումը՝ 2006թ. ի վեր առաջին անգամ հենց այս տարի ձեռնամուխ լինել գազային լծակի օգտագործմանը, առաջին հերթին կապվում է ուկրաինական ընտրությունների հետ: Պատահական չէ, որ ճգնաժամի բոլոր օրերին ռուսական տեղեկատվական քաղաքականությունը ուկրաինական կողմից թիվ մեկ մեղավոր էր նշում նախագահ Վիկտոր Յուշչենկոյին, իսկ գազային պայմանագիրն էլ Մոսկվան ի վերջո կնքեց վերջինիս հակառակորդ, վարչապետ Յուլյա Տիմոշենկոյի հետ՝ ներուկրաինական քաղաքական դաշտում նպաստելով Տիմոշենկոյի հեղինակության աճին: Հնարավոր է, որ Ուկրաինայի նախագահական ընտրություններում Կրեմլն ավելի շատ պաշտպանի Տարածաշրջանների կուսակցության նախագահ Վիկտոր Յանուկովիչին, սակայն Ուկրաինայում Մոսկվայի այսօրվա գլխավոր նպատակը նախագահ Յուշչենկոյի վերընտրվելը բացառելն է<sup>1</sup>:

*Մարգիս Հարությունյան  
«Նորավանք» հիմնադրամ*

---

<sup>1</sup> Այն, որ Մոսկվան հասնում է նպատակին, վկայում են Ուկրաինայի Գիտությունների ազգային ակադեմիայի կենտրոններից մեկի անցկացրած սոցիալոգիական տվյալները (հունվարի 13, 2009թ.)՝ ամենաբարձր վարկանիշն ունի Վիկտոր Յանուկովիչը՝ 30.3%, Յուլյա Տիմոշենկոն ունի 16.7%, նախագահ Վիկտոր Յուշչենկոն՝ 2.9%:

## ԳԱԶԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍՐ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆ ԱՅՍ ՀԱՐՑՈՒՄ

Որոնք են պատճառները, որ վերջին տարիներին գազի հարցը Ռուսաստանի և Ուկրաինայի հարաբերություններում պարբերաբար լարվածության պատճառ է հանդիսանում և որոնք են ներկա ճգնաժամի խնդիրները, հարցերի պատասխանը ոչ միայն երկու երկրների հարաբերություններում ամկա հակասությունների մեջ է, այլ նաև գազի համաշխարհային շուկայում Ռուսաստանի դիրքերը թուլացնելու համար թիվ մեկ տերության՝ ԱՄՆ-ի ձգտման մեջ:

Գաղտնիք չէ, որ անցած տարվա դեկտեմբերին Մոսկվայում հավաքվել էին գազ արտահանող երկրների ղեկավարները: Հանդիպման արդյունքում տեղի ունեցավ այն, ինչն է սկզբնապես թե՛ ԱՄՆ-ը և թե՛ Եվրամիությունը հայտարարել էին անցանկալի՝ ստեղծվեց «Գազ արտահանող երկրների ֆորումը»: Կազմակերպություն, որն, ըստ արևմտյան շատ վերլուծաբանների, իր ձևի մեջ գազ արտահանող երկրների նոր *OPEC* է, այսինքն՝ կառույց, որը, վերահսկելով էներգակրի այդ տեսակի շուկան, կարող է մոնոպոլ գներ սահմանել, ինչը կարող է հակասել տվյալ ապրանքի իրական շուկայական արժեքին: Նկատենք, որ եթե *OPEC*-ը վերահսկում է նավթի համաշխարհային շուկայի 40%-ը, ապա այս նոր կառույցը գազի մոտ 70%-ը, այսինքն՝ այս կառույցի ազդեցությունը համաշխարհային շուկայի վրա շատ ավելի մեծ է: Նշենք, որ կառույցի 3 հիմնական անդամների՝ Ռուսաստանի, Իրանի և Կատարի գազի ապացուցված պաշարները համապատասխանաբար կազմում են 47.8, 26.4 և 25.7 տրլն մ<sup>3</sup>: Ռուսաստանից բացի, Եվրոպային գազ մատակարարող այդ շուկայի երկրորդ հիմնական մատակարարը Ալժիրն է, որի գազի պաշարները կազմում են մոտ 4.58 տրլն մ<sup>3</sup>: Եվ այսպես, գազի *OPEC*-ի ստեղծումը, կարելի է ասել, արդեն փաստ է, և այդ իրադարձությունը փաստորեն համընկնում է Ռուսաստանի և Ուկրաինայի միջև գազի գնի մատակարարման շուրջ և ապա դեպի Եվրոպա գազի առաքման հարցում ճգնաժամի սրմանը: Հիշեցնենք, որ «Գազ արտահանող երկրների ֆորում» կազմակերպությունը պաշտոնապես հիմնվեց 2008թ. դեկտեմբերի 23-ին, Մոսկվայում: Մինչ այդ նախորդել էր այդ կառույցի շուրջ բանակցությունների երկարատև ժամանակաշրջան՝ սկսած 2001թ.: Պաշտոնապես այս կազմակերպությանը մաս են կազմում Ալժիրը, Բոլիվիան, Բրունեյը, Վենեսուելան, Եգիպտոսը, Ինդոնեզիան, Իրանը, Կատարը, Լիբիան, Մալայզիան, Նիգերիան, ԱՄԷ-ը, Ռուսաստանը, Տրինիդադ և Տոբագոն: Մի շարք երկրներ, օրինակ՝ Նորվեգիան, Թուրքմենստանը և այլն, չնայած չեն անդամակցում այս կառույցին, սակայն որպես դիտորդ մասնակցում են նրա աշխատանքներին: Ինչևէ, գազ առաքող երկրների այս ֆորումի ստեղծումը, ինչպես նշեցինք, միանշանակ բացասական ընդունվեց թե՛ Եվրամիության և թե՛ ԱՄՆ-ի կողմից: Վերջինս նույնիսկ հայտարարեց, թե դա սպառնալիք է իր ազգային շահերին: Եվ չնայած այս կառույցը շատերն անվանում են գազի *OPEC*, սակայն իրականում այն չունի այն լիազորությունները, որն ունի *OPEC*-ը, այն չի կարող ազդել գազի գնի ձևավորման վրա, քանի որ դրա համար միջազգային բորսաներ չկան: Արևմուտքի կողմից ֆորումի ստեղծման բացասական ընկալումը պայմանավորված էր հատկապես սրվող ֆինանսական և տնտեսական ճգնաժամով: Հիշեցնենք նաև, որ 2008թ. դեկտեմբերին Կիևում Ուկրաինայի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները ռազմավարական համագործակցության մասին պայմանագիր կնքեցին, որն,



ըստ շատ վերլուծաբանների, ուղղակի առնչություն ունի հետագայում Ռուսաստանի հետ սրվող գազի ճգնաժամի հետ: Այդ պայմանագրում առանձին կետով ասվում է, որ ԱՄՆ-ը պատրաստ է օգնել Ուկրաինայի գազամուղային համակարգի մոդեռնիզացմանը: Եվ թեև ռուսական կողմի մեղադրանքներին, թե ճգնաժամում առկա է Վաշինգտոնի գործոնը, անմիջապես հետևեց ԱՄՆ պետքարտուղարության հերքումը, և վերջինիս ներկայացուցիչ Շոն Մակքորմակը հայտարարեց, թե այդ կասկածները անհիմն են, սակայն շատ վերլուծաբանների կարծիքով, այստեղ հստակ երևում է երրորդ կողմի ներգրավվածությունը, որն ուղղակիորեն թելադրում է Կիևին:

Ինչևէ, հետևելով այս ճգնաժամի հասունացմանը և սրմանը, նկատելի է դառնում, որ այն պայմանավորված է ոչ միայն ներուկրաինական քաղաքական ճգնաժամով, որն իսկապես լրջորեն ազդում է իրավիճակի վրա, այլ երրորդ երկրների ազդեցությամբ: Այստեղ պարզապես փոխվել է ազդեցության ուղղությունը, այսինքն՝ եթե նախկինում ԱՄՆ-ը փորձում էր կտրել Ռուսաստանին կենտրոնաասիական գազից, ինչի համար երկարատև և համառ քանակություններ էր վարում թե՛ Ղազախստանի, թե՛ Ուզբեկստանի և թե՛ Թուրքմենստանի հետ, ապա այսօր Ռուսաստանին կտրում են գազի սպառման նրա հիմնական շուկայից՝ Եվրոպայից: Նշենք, որ Եվրամիության սպառման ծավալները 486 մլրդ մ<sup>3</sup> է (2006թ. տվյալներով), իսկ 2020թ. այն կհասնի մոտ 640 մլրդ մ<sup>3</sup>: Մա այն դեպքում, երբ Եվրոպայում գազի արդյունահանման ծավալները կրճատվում են, հետևաբար նրա կախվածությունն առաքող երկրներից կմեծանա: Նշանակում է, որ Ռուսաստանի ազդեցությունը եվրոպական էներգետիկ շուկայի վրա կմեծանա և կախվածությունը Մոսկվայից միայն կավելանա: Նման պայմաններում ճգնաժամը կարող է լրջորեն խաթարել պաշտոնական Մոսկվայի հեղինակությունը՝ որպես գազ առաքող հուսալի երկրի, և պաշտոնական Բրյուսելն էլ ավելի մեծ թափով կսկսի ռուսական գազին այլընտրանք փնտրել: *NABUCCO* ծրագիրն ի սկզբանե միտված էր Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա գազի առաքման, այսինքն՝ այս շուկայում ռուսական «Գազպրոմի» ազդեցության թուլացմանը և ընդհանրապես այստեղից ռուսական գազի մենաշնորհատերի դուրս մղմանը: Նշենք, որ տարեկան միայն Թուրքմենստանից և Ուզբեկստանից «Գազպրոմը» ձեռք է բերում 120 մլրդ մ<sup>3</sup> գազ, և այս գազի մի մասի ուղղումը դեպի *NABUCCO* խողովակաշար լրջորեն կխաթարի ռուսական ընկերության հեղինակությունը թե՛ Կենտրոնական Ասիայում, որպես գազի հիմնական գնորդի, և թե՛ Եվրոպայում, որպես գազի հիմնական մատակարարի: Ռուս-ուկրաինական ճգնաժամը այս գործը մասամբ արդեն կատարել է: Այն, որ այս գործընթացին Ուկրաինայում վաղուց էին պատրաստվում, հուշում է նաև այն, որ 2008թ. ընթացքում այդ երկրին հաջողվել է իր գազապահեստարանները լցնել հնարավոր առավելագույն գազի պաշարներ՝ մոտ 32 մլրդ մ<sup>3</sup>՝ հաշվի առնելով, որ այդ երկրում գազի արդյունահանման ծավալը տարեկան կազմում է մոտ 20 մլրդ մ<sup>3</sup>, իսկ սպառման ծավալը 46 մլրդ մ<sup>3</sup> է, պարզ է դառնում, որ պաշտոնական Կիևը լավ է նախապատրաստվել այս ճգնաժամին և երկիրն ապահովել է մեկ տարվա համար անհրաժեշտ գազով, հետևաբար իրավիճակը ձգձգելու դեռ որոշակի ռեսուրս ունի: Ավելին, այս ընթացքում ուկրաինական պաշտոնական աղբյուրներն արևմտյան մամուլում ակտիվորեն սկսեցին լուրեր տարածել, թե ճգնաժամի իրական պատճառն այն է, որ Ռուսաստանը Եվրոպա գազ մատակարարելու անհրաժեշտ պաշարներ չունի:

Թեև պարզ է, որ սկսված ճգնաժամն ավելի շատ քաղաքական է, քան տնտեսական, հասկանալի է նաև, որ իրականում Եվրոպային, միևնույն է, չի հաջողվի իրական այլընտրանք գտնել Ռուսաստանին, իսկ կենտրոնաասիական երկրներն էլ, հաշվի առնելով վերջիններիս վարչակազմերի կախվածությունը «Գազպրոմի» գումարներից, չեն կարող հրաժարվել այդ ընկերությանը գազ վաճառելու առաջարկից: Նաև միաժամանակ սկսվել է մի գործընթաց,

որը բավական տհաճ է պաշտոնական Մոսկվայի համար: Այս պայմաններում Եվրամիությունը սկսում է արագացնել նոր այլընտրանքային գազամուղի կառուցման ծրագիրը, որը պետք է շրջանցի թե՛ Ռուսաստանը, թե՛ Ուկրաինան: Բրյուսելը կփորձի ուղիղ բանակցությունների մեջ մտնել Կենտրոնական Ասիայի երկրների հետ, և վերջիններս էլ, ըստ շատ վերլուծաբանների, այս ճգնաժամից հետո ավելի խոր կընկալեն նրանց առաջարկները՝ ցանկանալով նոր, Ռուսաստանը շրջանցող գազամուղի հետ կապված լինել՝ որպես այլընտրանք ռուսական ուղու: Ստեղծված վիճակից դուրս գալու համար Մոսկվան պետք է արագացնի Բալթիկ ծովով կառուցվող «Հյուսիսային հոսք» և Սև ծովով նախատեսված «Հարավային հոսք» կոչվող ծրագրերը: Ինչպես հայտնի է, «Գազպրոմը» և իտալական *ENI* ընկերությունն արդեն պայմանավորվել են արագացնել «Հարավային հոսքի» նախագծումը և կառուցումը:

*Արմեն Մանվելյան*

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ.**  
**«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ - 2008Թ.»**  
**ԶԵԿՈՒՅՑԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆԸ**

***Միջազգային էներգետիկ գործակալություն. ընդհանուր տեղեկատվություն<sup>1</sup>***

Միջազգային էներգետիկ գործակալությունը (International Energy Agency) անկախ կազմակերպություն է, որի գործունեությունը հիմնվում է միջկառավարական համագործակցության սկզբունքի վրա: Հիմնադրվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)<sup>2</sup> կողմից 1974թ. վերջերին՝ նավթային ճգնաժամի ժամանակաշրջանում, որի հիմնական նպատակն էր աջակցել ճգնաժամի հաղթահարման, նավթի մատակարարումների կարգավորման գործընթացին: Միջազգային էներգետիկ գործակալությունը (ՄԷԳ) էներգետիկ ոլորտի համալիր ծրագրերի շրջանակներում համագործակցում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ 30 պետությունների հետ: ՄԷԳ հիմնական նպատակների շարքում կարելի է առանձնացնել՝

- աջակցությունը նավթի մատակարարման համակարգերին, դրանց կատարելագործումը,
- աջակցությունը համաշխարհային էներգետիկ քաղաքականության իրագործմանը՝ ՏՀԶԿ անդամ պետություն չհանդիսացող երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության միջոցով,
- նավթի միջազգային շուկաների մշտական տեղեկատվական համակարգերին նպաստելը,
- էներգակիրների համաշխարհային պահանջարկի ու մատակարարումների համակարգի կատարելագործումը՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրների զարգացման և էներգիայի օգտագործման արդյունավետության բարձրացման ճանապարհով,
- միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելը էներգետիկ տեխնոլոգիաների բնագավառում,
- բնապահպանական ու էներգետիկ քաղաքականության ինտեգրումը:

Ներկայում գործակալությունն ունի 190 հոգուց բաղկացած անձնակազմ, հիմնականում էներգետիկ ոլորտի մասնագետներ՝ ընտրված կազմակերպության անդամ 28 երկրներից<sup>3</sup>: ՄԷԳ կենտրոնատեղին Փարիզում է:

<sup>1</sup> <http://www.iea.org/about/index.asp>

<sup>2</sup> ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD), որի անդամ են 30 երկրներ (1961թ. անդամակցել են Ավստրիան, Բելգիան, Կանադան, Դանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Իսլանդիան, Իռլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Նորվեգիան, Պորտուգալիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, հետագայում անդամակցել են Ճապոնիան, Ֆինլանդիան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Մեքսիկան, Չեխիան, Հարավ. Կորեան, Հունգարիան, Լեհաստանը, Սլովակիան):

<sup>3</sup> Միջազգային էներգետիկ գործակալության անդամ պետություններն են Ավստրալիան, Ավստրիան, Բելգիան, Կանադան, Չեխիան, Դանիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իռլանդիան, Իտալիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սլովակիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Թուրքիան, Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները: Հարկ է նշել նաև, որ ՄԷԳ աշխատանքներին մասնակցում է Եվրահանձնաժողովը:

**«Համաշխարհային էներգետիկայի կանխատեսումներ - 2008թ.» զեկույցը  
(World energy Outlook - 2008<sup>1</sup>)**

ՄԷԳ «Համաշխարհային էներգետիկ կանխատեսումներ - 2008թ.» (ՀԷԿ) զեկույցում հիմնական ուշադրությունը դարձվում է նախորդ տարվա ընթացքում էներգետիկ շուկաներում եղած միտումների ու զարգացումների վերլուծությանը՝ կենտրոնանալով նավթագազային համաշխարհային մատակարարումների, արդյունահանման ու պաշարների հիմնախնդիրների ու ոլորտում առկա մարտահրավերների վրա: Առանձնահատուկ անդրադարձ է կատարվում նավթի ու գազի ներկա և առաջիկա երկու տասնամյակում (մինչև 2030թ.) համաշխարհային պաշարների ու դրանց արդյունահանման ծավալների դինամիկայի ու միտումների, նավթի գների կանխատեսումներին: Պետք է նշել, որ ՄԷԳ մասնագետների առաջադրած տեսլականներում, որոնք վերաբերում են 2007-2030թթ., հաշվի են առնվել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ու դրա հնարավոր հետևանքները ոլորտի վրա: Գործակալության փորձագետներն ուսումնասիրել են նաև համաշխարհային կլիմայական փոփոխությունների համատեքստում արդյունաբերական արտանետումների սահմանափակումների ազդեցությունը համաշխարհային էներգետիկ շուկաների վրա:

Հոդվածում կփորձենք անդրադարձալ այդ հետազոտության կանխատեսումների առանցքային շեշտադրումներին ու ներկայացնել հիմնական հետևությունները:

**1. Համաշխարհային էներգետիկ համակարգի անկայունությունը**

Միջազգային էներգետիկ գործակալության փորձագետները հանգել են այն հետևությունների, որ էներգիայի մատակարարումների ու սպառման համաշխարհային ընթացիկ միտումներն ու զարգացումները բավական անկայուն են, և դա արտահայտվում է ինչպես բնապահպանական, այնպես էլ տնտեսական ու սոցիալական բնագավառներում: Փորձագետների հավաստիացմամբ, սակայն, համաշխարհային էներգետիկ համակարգում առկա անկայունության միտումները հնարավոր է հաղթահարել գլխավորապես երկու ճանապարհով.

- էներգիայի հուսալի ու մատչելի մատակարարումների ապահովում,
- անցում համեմատաբար ցածր քանակությամբ արտանետումներով էներգամատակարարման առավել արդյունավետ ու բնապահպանական տեսանկյունից առավել անվտանգ համակարգի:

**2. Անցում առավել ցածր ածխածնային միացություններ պարունակող էներգետիկ համակարգի**

էներգիայի սպառողական համաշխարհային քաղաքականությունում անհրաժեշտաբար պետք է վերափոխվի մոտեցումը էներգիայի օգտագործման տեխնոլոգիաներին: Մասնագետների գնահատականների համաձայն, առաջարկվում է հնարավորինս նվազեցնել համաշխարհային էներգետիկ աղբյուրներում ածխածնային միացությունների ու ջերմոցային գազերի պարունակությունը՝ համաշխարհային մակարդակով կլիմայական արհավիրքներից խուսափելու համար (հակառակ դեպքում, դրանց աճը երկարաժամկետ հեռանկարում կհանգեցնի համաշխարհային միջին ջերմաստիճանի մինչև 6°C բարձրացմանը): Հետևողական մոտեցում է պահանջում էներգիայի մատակարարների կողմից ներդրումների զգալի բաժինը դեպի ցածր ածխածնային միացություններ պարունակող տեխնոլոգիաների զարգացման ոլորտ ուղղելու խնդիրը: Այդ քաղաքականության իրագործմանն էապես կարող են նպաստել տարբեր երկրների կառավարությունները՝ համապատասխան ֆինանսական խթանիչների ու իրավական դաշտի ձևավորման ճանապարհով, ինչը լուրջ ներդրում կարող է ունենալ համաշխարհային էներգետիկ համակարգի անվտանգության ու կլիմայական քաղաքականության արդյունավետության ապահովման գործում:

<sup>1</sup> <http://www.iea.org/>

### **3. Վերականգնվող էներգետիկայի տեխնոլոգիաների արագ զարգացում**

Էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման ժամանակակից տեխնոլոգիաները կարճաժամկետային զարգացման համեմատաբար կտրուկ տեմպեր և 2010թ. սկսած՝ անհիմն հետո կհանդիսանան էլեկտրաէներգիայի երկրորդ խոշորագույն աղբյուրը՝ առաջ անցնելով նույնիսկ բնական գազից: Էներգիայի վերականգնվող աղբյուրների տեխնոլոգիաների զարգացման անհրաժեշտ ծախսերի նվազման և այս ուղղությամբ կառավարությունների հետևողական քաղաքականության արդյունքում լուրջ նախադրյալներ են ստեղծվում վերականգնվող էներգետիկայի ճյուղերի՝ սուբսիդիաներից կախվածության թուլացման և ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ արտադրությունը խթանելու համար: Կանխատեսումների համաձայն, եթե վերականգնվող էներգետիկ աղբյուրների մասնաբաժինը (բացառությամբ հիդրոէներգետիկայի ուղղությամբ) էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրությունում 2006թ. կազմում էր 1%, ապա 2030թ. այն կկազմի արդեն 4%:

Վերականգնվող էներգետիկայի աղբյուրների զարգացման տեխնոլոգիական առաջընթացին էապես կնպաստեն վերջին տարիներին ակնհայտ դարձած նավթի գների տատանումներն ու շուկայական գների անկայունությունը: Ոլորտի զարգացման տեմպերին կխթանեն նաև բնական գազի մատակարարումների հետ կապված քաղաքական շահարկումները: Մասնավորաբար, ռուս-ուկրաինական «գազային պատերազմը» կստիպի եվրոպացի գործընկերներին ոչ միայն այս ուղղությամբ նոր ռազմավարություն մշակել, այլև նոր լիցք հաղորդել վերականգնվող էներգետիկայի զարգացմանը:

### **4. Նավթը կշարունակի մնալ էներգիայի առաջնային աղբյուր**

Չնայած էներգիայի այլընտրանքային աղբյուրների ու տեխնոլոգիաների զարգացման մասին լավատեսական գնահատականներին ու կանխատեսումներին, այնուհանդերձ, նավթը կշարունակի մնալ էներգիայի հիմնական աղբյուրը:

Միջազգային էներգետիկ գործակալության «ՇԷԿ - 2008թ.» բազային սցենարի համաձայն, նավթի համաշխարհային ընդհանուր պաշարները բավական զգալի են և կարող են ապահովել համաշխարհային արտադրության կանխատեսվող աճի տեմպերը 2030-ից հետո էլ, դեռ երկար ժամանակ: Նավթի ու գազային կոնդենսատի<sup>1</sup> հայտնաբերված պաշարների ծավալները տատանվում են 1,2-1,3 տրլն բարելի շրջանակներում (այդ թվում և 0,2 տրլն բարել ոչ ավանդական նավթը)<sup>2</sup>: Պետք է նկատել, որ այդ ցուցանիշը 1980թ. ի վեր գրեթե երկու անգամ ավելացել է: Փորձագետները միակարծիք են այն հարցում, որ դա բավարար է, նավթի համաշխարհային սպառման ներկայիս տեմպերի պարագայում, ավելի քան 40 տարով ապահովելու համար համաշխարհային մատակարարումը:

Գործակալության փորձագետները կանխատեսումներ են կատարել նաև բնական գազի համաշխարհային պաշարների վերաբերյալ: Դրանց համաձայն, բնական գազի համաշխարհային պաշարները դեռ զգալի են, սակայն, ինչպես և նավթի պաշարների դեպքում, կենտրոնացած են ոչ մեծ քանակությամբ երկրներում: Այսպես, բնական գազի հայտնաբերված համաշխարհային պաշարները գնահատվում են շուրջ 180 տրլն խմ, ինչը բավարար է համարվում առաջիկա 60 տարիների ընթացքում արդյունահանման ընթացիկ տեմպերի պահպանման

<sup>1</sup> Գազային կոնդենսատներ - գազային կոնդենսատները տարբեր բաղադրության բարձրաէներգետիկ աղբյուրներից են, որոնք անջատվում են բնական գազերից՝ այսպես կոչված գազ-կոնդենսատային հանքերից, վերջիններիս արդյունահանման ժամանակ:

<sup>2</sup> Նշենք, որ ավանդական նավթի արդյունահանվող պաշարների (որոնք ներառում են նոր հանքերի սկզբնական հայտնաբերված և հնարավոր պաշարների, ի հավելումն՝ դեռևս չհետախուզված նավթի պաշարների) հանրագումարի պարագայում ներկայումս նավթի համաշխարհային պաշարները կարող են հասնել մինչև 3,5 տրլն բարելի: Նավթի չհայտնաբերված զգալի պաշարներ, ըստ գնահատականների, կան Մերձավոր Արևելքում, Ռուսաստանի Դաշնությունում և Կասպյան տարածաշրջանում:

պարագայում<sup>1</sup>: Գազի համաշխարհային պաշարների ավելի քան կեսը՝ մոտավորապես 56%-ը, բաժին է ընկնում ընդամենը երեք երկրների՝ Ռուսաստանի Դաշնությանը, Իրանին և Կատարին: Եվ դա այն պարագայում, երբ համաշխարհային պաշարների գրեթե կեսը բաշխվում է ողջ աշխարհի 25 հանքերի շրջանակներում և ծածկվում ի հաշիվ «Նավթ արտահանող երկրների կազմակերպության» անդամ պետությունների: Հարկ է նշել, որ գազի համաշխարհային պաշարները 1980թ. ի վեր ավելացել են ավելի քան երկու անգամ, որի բարձրագույն աճը գրանցվել է Մերձավոր Արևելքում:

### **5. Էներգիայի հիմնական աղբյուրների համաշխարհային պահանջարկի աճ 2006-2030թթ.**

Հաշվի առնելով Չինաստանի ու Հնդկաստանի շարունակվող տնտեսական աճի տեմպերը՝ 2006-2030թթ. վերջիններս բաժին է ընկնելու էներգիայի հիմնական աղբյուրների համաշխարհային պահանջարկի աճի ավելի քան կեսը: Բիարկե, այս գնահատականներում անհրաժեշտ է նկատի ունենալ 2007թ. կեսերից սկսած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ու դրա բացասական հետևանքները համաշխարհային տնտեսության՝ մինչ այդ արձանագրած արագ աճի տեմպերի վրա: Ու թեև տնտեսական ճգնաժամի ամենածանր ազդեցությունը շարունակում են կրել Միացյալ Նահանգներն ու ԵՄ երկրները, անմասն չեն մնա նաև Չինաստանն ու Հնդկաստանը, որոնց տնտեսությունները պակաս ինտեգրված չեն համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգին:

ՄԷԳ փորձագետների առաջադրած հիմնական սցենարի համաձայն, 2006-2030թթ. էներգիայի հիմնական աղբյուրների համաշխարհային պահանջարկը միջին հաշվով կաճի 1.6%-ով՝ 11,730 մլն տոննա նավթային համարժեքից (մլն տ.ն.հ.) հասնելով մինչև 17,010 մլն տ.ն.հ.: Արդյունքում՝ նշված ժամանակահատվածում աճը կկազմի շուրջ 45%: Մերձավոր Արևելքի երկրները կամրապնդեն դիրքերը՝ որպես համաշխարհային էներգիայի հիմնական աղբյուրների պահանջարկի կարևորագույն կենտրոն, ինչը կավելացնի համաշխարհային աճող պահանջարկը ևս 11%-ով: Հարկ է նշել, որ պահանջարկի աճի գրեթե 87%-ը ընդհանուր առմամբ բաժին է ընկնելու Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության անդամ չհանդիսացող երկրներին: Արդյունքում՝ էներգիայի հիմնական աղբյուրների համաշխարհային պահանջարկում վերջիններս մասնաբաժինը 51%-ից կաճի մինչև 62%-ի:

Ինչ վերաբերում է նավթի շուկային, ապա փորձագետների կանխատեսումների համաձայն, 2007-2030թթ. նավթի համաշխարհային պահանջարկը տարեկան կաճի 1%-ով՝ օրական 85 մլն բարելից (2007թ.) հասնելով մինչև 106 մլն բարելի (2030թ.): Նավթի համաշխարհային պահանջարկի աճը նույնպես բաժին է ընկնելու ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրներին: Ինչ վերաբերում է ՏՀԶԿ անդամ պետություններին, ապա այստեղ նավթի պահանջարկն ընդհանուր առմամբ կնվազի՝ հիմնականում տրանսպորտային ոլորտից դուրս նավթի պահանջարկի նվազման հետևանքով:

Նույն տրամաբանությունը նկատվում է նաև բնական գազի ոլորտում: Վերջինիս համաշխարհային պահանջարկն առանձնանում է աճման համեմատաբար բարձր ցուցանիշներով, ինչը տարեկան կազմում է շուրջ 1,8%: Իսկ բնական գազի մասնաբաժինը էներգիայի հիմնական աղբյուրների համաշխարհային ընդհանուր պահանջարկում կավելանա ոչ զգալի չափով՝ մինչև 22% (ի դեպ, բնական գազի սպառման աճը գլխավորապես կուղղվի էլեկտրաէներգետիկայի ոլորտին):

